

653.5

9-54

1930


30 JUL 2010

Բ. Ն. ՋԵՅՂԼԻՑ

99

114

# ԲԱՄԲԱԿԻ ՑԱՆԲՍԸ



ՀԱՅԿԱՆՈՒԹՅԱՆ Գ. Բ. Կ.

633.5  
2-54

1930

19.159

633.5  
9-54

Բ. Ն. ԶԵՅԴԼԻՑ

# ԲԱՄԲԱԿԻ ՑԱՆՔՍԸ

1007  
33704

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ Ա. Բ.Կ.

ԹԻՖԼԻՍ—1930

## ԲԱՄԲԱԿԻ ՅԱՆՔՍՐ

Յերբ հողը հերկելով և փոցխելով լավ և նախապատրաստված, խնամքով փխրեցրած և և պարարտացրած, կարելի չէ անցնել բամբակը ցանելուն: Այս բոլոր աշխատանքները պետք է վաղորոք կատարված լինեն այն հաշվով, վոր ցանքսի լավ ժամանակը չանցնի և նա ժամանակին կատարվի, մի բան, վոր շատ կարևոր է բամբակի մշակույթի համար:

Յեթե ցանքսը ժամանակին և կանոնավոր կերպով է կատարված, ապա ցանածը միահամուռ կծլի, թփերը լավ կզարգանան և շատ ուժեղ կհավաքեն, բոլոր պատահարների դեմ կռվելու համար՝ վատ յեղանակի, հիվանդությունների ու վնասարարների, խոնավության պակասության դեմ հողի մեջ և այլն. թփերը այն ժամանակ շատ կնդուղներ (կողաներ) կզարգացնեն և լավ բերք կտան:

Յեթե բամբակը շատ վաղ ցանվի, վտանգ կա, վոր ծլերը ցրտահարվեն. կան տեղեր Անդրկովկասում, վորտեղ սառնամանիքները պատահում են բավական ուշ մինչև ապրիլի 15—20-ը և հարված են հասցնում բամբակենու մատղաջ, նուրբ ծլերին. բացի դրանից այսպիսի ցանքսը ստոր հողի մեջ, վորը դեռ արևի ճառագայթներից բավականին չի տաքացել, դանդաղեցնում է ծլումը, սերմերն մի մասը վտում է և ծլերը միահամուռ չեն լինի, կլինեն վախտ տնկիկներով, վորոնք ընդունակ չեն լինի ծակել կեղևը, վորը անձրևային յեղանակին հաճախ կազմվում է:

Ուշ ցանելու դեպքում բամբակը ուշ է հասնում և բերքին չարող են վնաս տալ աշնան սառնամանիքները: Այդ դեռ բավական չէ — ուշ ցանած բամբակից գործարաններում մաքրելու ժամանակ սովորաբար ստացվում է թելերի ավելի փոքր տոկոս այն կտավի (չիթի) համեմատությամբ, վորը հանված է ժամանակին

արագ ցանքսերից : Վերջապես ժամանակին կատարած ցանքսը տա-  
լիս առաջին տեսակի կտուրի շատ ավելի մեծ քանակ, վորը ըն-  
դունելության ժամանակ ավելի բարձր և դնահատովում, քան չհա-  
սած կնդուղներից հանած յերկրորդ տեսակը :

Այս բոլորը հաշվի առնելով, լավ տնտեսը հենց իր ոգտի  
համար կաշխատի ցանքսին վաղորոք պատրաստվել և ցանքսը վոչ  
շատ շուտ և վոչ ուշ կատարել :

Վորպեսզի իմանանք բամբակ ցանելու ամենալավ ժամանա-  
կը, փորձնական կայաններում բաղմաթիվ անգամ կատարված են  
փորձնական ցանքսեր զանազան ժամանակներին և պարզվել է,  
վոր բամբակի ցանքսին կարելի չէ ձեռնամուխ լինել միայն այն ժա-  
մանակ, յերբ հողը լավ տաքանա և նրա տաքությանը Յելսիի ջեր-  
մաչափով 15 աստիճանից պակաս չի : ավելի ապահով միահամուռ  
կլինեն ծղերը, յեթե տաքությունը լինի 20—25 աստիճան :

Մեզանում Անդրկովկասում ամենանպաստավոր ժամանակը  
բամբակը ցանելու համար սկսվում է մոտավորապես ապրիլի  
15-ից և տևում է վոչ ուշ քան մինչև մայիսի 15-ը : Վորոշ ու-  
յուններում, յեթե տվյալ ույունի համար արտակարգ յեղանակ  
չլինի, ամենից լավ է ցանել հետևյալ ժամանակներին՝

#### Ագրոբայան.

|                                                        |  |
|--------------------------------------------------------|--|
| Սալյանի — Մուղանի ույունը ապրիլի 15-ից մինչև մայիսի 20 |  |
| Շիրվանի (Գյոհչալի-Աղդաշի) ապր. 25-ից մինչև » 15        |  |
| Գանձակի ապրիլի 25-ից մինչև » 15                        |  |
| Բարդալի մայիսի 1-ից մինչև » 10                         |  |

#### Վրաստան.

|                                        |  |
|----------------------------------------|--|
| Բորչալուի Ապրիլի 25-ից մինչև մայիսի 10 |  |
| Ղարաբաղի » 25-ից մինչև » 10            |  |
| Կախեթի » 20-ից մինչև » 10              |  |

#### Հայաստան.

|                                                      |  |
|------------------------------------------------------|--|
| Կենտրոնական շրջաններ... ապրիլի 15-ից մինչև մայիսի 15 |  |
| Մեղրիի ույունը Հայաստան. ապր. 24-ից մինչև » 1        |  |
| Նախ. Խ. Հ. ապրիլի 25-ից մինչև » 15                   |  |

Միջին Ասիայում ցանում են մի քիչ շուտ և մինչև մայիսը  
ցանքսը այնտեղ արդեն վերջացրած է լինում :

Մենք տեսնում ենք, վորքան կարևոր է, վոր ցանքսերը ժա-  
մանակին արած լինեն : Բայց դա դեռ բավական չէ : Ցանքսը պի-  
տի կանոնավոր կերպով կատարած լինի և վոչ անխնամ, այլ  
խնամքով, վորովհետև դաշտային աշխատանքներից դա կարևո-  
րագույններից մեկն է, վորից կիսով չափ կախված է բամբակի  
լավ բերքը :

Սովորաբար ցանքսից առաջ սերմերը թրջում են, վորպեսզի  
հեշտացվի և արագացվի սերմերի ծլելը, վորոնք բավական կարծր  
կճեպ ունեն և առանց թրջելու շատ դանդաղ կծլեն :

Սերմերը թրջում են ըստ կարելիին հոսող, վոչ շատ սառը  
ջրի, որինակ, վոռոգիչ առուի մեջ, ուր նրանց թողնում են մի  
յերկու օրով տոպրակների մեջ : Կարելի չէ թրջել նաև հորի կամ  
տակառի մեջ, բայց այն ժամանակ ցանքսի թեկուզ ել ամենակարճ  
ժամանակով ուշանալու դեպքում հարկավոր է ջուրը փոխել, վոր-  
պեսզի սերմերը չծլեն կամ չփտեն :

Ջրից հանելուց հետո սերմերը չի կարելի թողնել, վոր կույ-  
տերով մնան, վորովհետև այս դեռության մեջ նրանք տաքանում  
են ու արագ ծլում և ծլերը ցանքսի ժամանակ հեշտ կկտրվեն :

Կանոնավոր թրջած սերմերը պետք է միայն ուռչեն և հա-  
ղիվ նկատելի բողբոջ արձակեն սպիտակ կետի նման. սերմը մատ-  
ներով ձգվելուց պիտի ճաքճքեն և միջուկը դուրս պրծնի :

Սերմերը թրջելուց հետո նրանց յերբեմն ավազի, չոր հողի  
կամ մոխրի հետ շաղախում տրորում են, վորպեսզի նրանք իրար  
կպչելով կոշտեր չկազմեն և ցանելու ժամանակ իրարից հեշտ  
դառնան :


Բամբակը ցանել կարելի չէ շաղաղան կամ շարքացան :

Առաջին յեղանակով սերմերը շաղ են տալիս՝ առաջուց ցանք-  
սի համար նախապատրաստված դաշտի մեջ և հետո հողի տակ են  
սնում, դաշտը արորով, փոցխով կամ տափանով թեթև հերկելով :  
Սկզբից թվում է, իբր շաղացանը պակաս աշխատանք է պահան-  
ջում — սերմերը ձգեցիր հողի մեջ ու բերքից սպասիր :

Շաղավաղի ցանելով սերմերից մի քանիսը խորը կընկնեն,  
ուրիշները ավելի վերև, մի քանիսն էլ դուրսը մակերեսի վրա կը-  
մնան : Խոր ընկածները կամ կփչանան, կամ թե դուրս կգան դե-  
ղին թույլ տնկիկները, վորոնց աճումը հետո հետ կընկնի. սերմե-

լի մի բուռ, վորը պատահամբ լավ պայմանների մեջ կրնան, ու ժեղ ծեր կտան — կտացվեն խայտադեմ վոչ հավասար ծերեր:

Իամբակի ծերերը հետո շուտ կերևան նաև անպետք խոտեր, վորոնք այնքան արագ ու ուժեղ են աճում, վոր շատ անգամ նրանց խիտ բուսականութիւնը բոլորովին խեղդում և բամբակի ծերերը: Այն ժամանակ բոլորին պարզ և լինում, վոր շարքացանք, վորը բոլորին իր հեշտութեան համար դուր և գալիս, միանգամայն անպետք և: Հետագայում հարկավոր և ահագին ժամանակ, աշխատանք և փող ծախսել ծերերի նոսրացման և քաղհանի համար, բայց ելի քիչ բան և դուրս գալիս:



Նկ. 1. Մեկ շարքային սերմացան «կոլ» հարմարեցրված և միաժամանակ ցանելու և պարարտացման նյութն ամելու համար:


Նոսրացումը, ինչպես հայտնի յե, կատարվում և այն նախատելով, վոր բամբակենու թփերը արձակ տեղ ունենան և նրանց մեջ տարածութիւնը հավասար լինի: Շաղ տվողի ցանելով, այս բանը շատ դժվար և անել և միշտ բույսերը մի տեղ շատ խիտ կլինեն, ուրիշ տեղ նոսր, և տեղեր կլինեն, վորտեղ վոչինչ չկա: Այսպիսի անհավասար ցանած դաշտը դժվար և փխրեցնել ուրազներով, իսկ այս բանը շատ և կարևոր, վորպեսզի բույսերը լավ աճեն ու լավ բերք տան:

Հետագայում մենք կտեսնենք, վոր շարքացանը շատ ավելի լավ և և բոլորովին դժվար չէ: Նախապես լավ հավասարեցնելով

դաշտը տափանով կամ մի քանի անգամ արորով և տափանով հարթեցնելով, անց են կացնում հետո փայտի «մարկյորը» (փոցխի նման գործիքը) 3—5 ատամներով, վորոնց մեջ հեռավորութիւնը նր պիտի լինեն 70—80 սանտ. և իրար հավասար:



Նկ. 2. Նվերի գործարանի սերմացանների միջին բամբակի շարքային ցանքսի («հարկադրական») սերմացան ապարատ:



Նկ. 3. Ստորին դուրս ընկած մասը փոքրիկ շրջանակի հետ մի-մի հատիկ բամբակի սերմ ցանելու համար (չնձող մեքենաների միջազային ընկ. սերմացանների մեջ):



Նկ. 4. Ստորին դուրս ընկած մասը փոքրիկ շրջանակի հետ յեղեպտացորեն ցանելու համար: Ձախ կողմից յերևում և «կարող»-ը («MKOM» սերմացանների մեջ):

Մարկյորի արած դժեւով ցանողը՝ զնում և ուրազը ձեռին և փոքր փոսիկներ շինելով իրարից 18—22 սանտիմետր հեռավորութեան վրա նրանց մեջ բամբակի մի քանի սերմ և դնում 3—4 սան-

տիմեոր խորութեամբ և նրանց մի քիչ ծածկում և խոնավ հողով: Այսպիսի ցանքի դեպքում մի դեսյատինին դնում և սերմացու 24 կիլոգրամից վոչ ավելի (շաղպանի դեպքում 60—100 կիլոգրամ) և դրանից հետո ել չի հարկավոր ցանքը տալիսնե—ուրեմըն ստացվում և սերմերի և աշխատանքի տնտեսութիւնը:

Բացի ցանքի նկարագրած յեղանակից, ձեռով ցանում են դեռ ելի տեղ—տեղ, որինակ, Միջին Ասիայում այնպիսի տեղերում, վորտեղ բամբակը բուսնում և բարձր զիգդագավոր մարգերում (ձորակների մեջ) կամ մեղ մոտ աղբջանի Սալյանի ուստում «չարխերով» վտուղվող հողերի վրա:

Հանքի այսպիսի յեղանակները պահանջում են աշխատանքի մեծ ծախս՝ ձեռով ցանելու և ամբողջ ամառվա ընթացքում դաշտը ձեռով մշակելու համար և նա վարձատրում և բամբակագործին լավ բերքերով, վորը նրանք ստանում են իրենց դաշտերից: Բայց առհասարակ այժմ ամեն տեղ անցնում են շարքացանին, վորը ցանքի ամենալավ և ամենից ձեռնուու յեղանակն է:

Շարքացանի գործիքները զանազան սխեմաների են լինում: Կան յեղիստացորենի կան բամբակի սերմերը ցանելու համար (ըստ ցանկութեան փոխելով պահեստի մասերը)՝ սերմնացան ուրիշ գործիքները հատկացրած են միայն բամբակի համար. կան այնպիսիները, վորոնք ծառայում են հանքային աղերը և պարարտացնող խառնուրդները հողի մեջ ներմուծելու համար, վերջապես կան և այն տեսակ, վոր միաժամանակ ցանում են և սերմերը և պարարտանյութերը (комбинированные):

Սերմացան գործիքները լինում են միշարքային, յերկշարքային, յերեքշարքային նայած, նրանք մի շարք են ցանում, յերկու, թե յերեք:

Իրենց շինվածքով սերմնացան գործիքները շատ տարբեր են լինում, բայց բոլորն ել ունեն հետևյալ զլխավոր մասերը՝ ունեն տեղ սերմացուի նյութի համար, վորը ներկայացնում և յերկաթե արկղ՝ անիվներ ունեցող շրջանակի վրա ամրացրած. այս անիվները կոչվում են ոսերեն (խողովիկ), սոնին շարժող:

Արկղի հատակի վրա գտնվում և դուրս ձգող ապարատը և նա հատկապես այնպես և հարմարեցրած, վոր ըստ ցանկութեան կարողանա ցանել շատ կամ քիչ:



Նկ. 5. Մեկ դիսկանի խովիկ:




Նկ. 6. Յերկդիսկանի խովիկ. Աջ դիսկն հանած:



Նկ. 7. Թաթավոր խովիկ:



Նկ. 8. Դիսկային կեռ ձողավոր խովիկ:



Նկ. 9. Կեռձողավոր խովիկ:

Արկղին հարում և ներքևից սերմ անցկացնող խողովակը կամ նավը, վորի ծայրին խոփ և կցված. խոփը սերմնացան գործիքը շարժվելու ժամանակ քիչ բարձրացնում և (հեղում և) հողը և նույն միջոցին սերմերը սուղում և պատշաճավոր խորությամբ:

Մի քանի սերմնացան գործիքներում հետևից ամրացրած են յերկու կողմ թաթիկներ սերմերը հողի տակ անելու համար և թեթև հարթիչ ցանքսը հարթվելու համար:

Շրջանակը, վորին ամրացրած և սերմնացան գործիքը, ունի կես կամ չափալ լուծը կցելու համար:

Սերմնացան գործիքի շինվածքի, գործածության և խնամքի մասին մանրամասնորեն կարելի չե իմանալ «բամբակագործի ինվենտար» դրբույկից:

Անդրկովկասում առաջ շատ էյին տարածված «Բանների» միջարքային բամբակային սերմնացան գործիքները:


Նրանց հետ յերևի ծանոթ են բամբակագործներից շատերը: Բամբակային ուրիշ սերմնացան գործիքներից ամենից հարմար են տեղական պայմանների համար Եվերի գործարանի սերմնացան գործիքը № 28 Մարկայի, վորը ունի յերկզիսկավոր խոփ և յերկշարքային սերմացան գործիք՝ ձողաձև խոփերով № 120 մարկայի, վորը արտադրում և «Հնձելու մեքենաների Միջադպյան Ընկերությունը Ամերիկայում» (նկար 11):

Լավ և բանում «Կարմիր Հոկտեմբեր» գործարանում արտադրվող միջարքային բամբակային սերմնացան գործիք «Ռեկորդ» մարկայինը, վորը իր շինվածքով նման է «Եվերի» սերմնացանի, միայն թե նրա խոփը յերկզիսկավոր չի, այլ սուր ծայր ունի:


Բամբակ ցանելիս շատ կարևոր է, վոր շարժելը հավասար լինեն ձգած և իրարից հավասար հեռավորության վրա լինեն. դրանով հեշտանում և հետագայում միջարքային արանքների մըշակումը:

Շարքերի ուղղությունը դժվոր է կամ փայտյա, տանը պատրաստած մարկյորներով (նկար 1) կամ սերմնացման գործիքին կցված յերկաթյա մարկյորներով:

Յեթե ցանում են փայտյա մարկյորներից ոգտվելով, այն ժամանակ առաջ նրան են գործի վրում, դժում են նրանով շարքերի ուղ-



Նկ. 10. Մեկ շարքային բամբակի սերմնացան «Բանների»:




Նկ. 11. Բամբակի յերկշարքային սերմնացան (անկող) № 120, հնձող մեքենաների միջադպյան ընկերության (MISKIM): Սերմնացանն այնպես և հարմարեցրած, վոր նրանով կարելի չե ցանել բամբակի և յերկապտացորենի սերմեր:


դուրծյունը և հետո նրա գծած աղոսներով գնում և դաշտը սերմնացանք:

Սերմնացան գործիքին կցված մարկյորը գիծ և բնցկացնում դաշտի դեռ չցանած կողմից սերմնացման գործիքի շարժման ժամանակ, այս գծով բաց են թողնում ձի, իսկ նրա լիտեից սերմնացան գործիքի խոփը աղոս և ձգում, վորի մեջ ընկնում են սերմերը:

Մարկյորը կցվում և սերմնացան գործիքին ծխնիով և նրան կարելի չէ թողնել այս և այն կողմը ձգել: Կան սերմնացան գործիքներ, վորոնք յերկու մարկյոր ունեն սերմնացան գործիքի շարժման ժամանակ մեկը հողն և աղոսում, իսկ մյուսը բարձրացրած և:



Նկ. 12. Բամբակի սերմնացանի բարձրացրած դիսկավոր փոցի:



Նկ. 13. Դիսկավոր փոցին աշխատելիս:

Տարածությունը յերկու շարքերի արանքում լինում է 70—90 սանտիմետր, իսկ մյուսների մեջ տարածությունը թողնում են 35 սանտ.: Լինում են սերմնացան գործիքներ, վորոնք բաժանմունքներ (ըններ) ունեն և սերմերը գցում են ընդմիջումներով: Յեթև սերմնացան գործիքը այս ձևով հարմարեցված չէ, սերմերը դուրս են ձգվում անընդհատ և հետո ավելորդ բույսերը հեռացվում են նոսրացման ժամանակ:

Բամբակային սերմնացան գործիքը հեշտ և հարմարեցնել ուղած խորության համար. այս դեպքում բոլոր սերմերը տեղավորվում են հավասար խորությամբ և տալիս են միաժամանակ հավասար ծլերը և յեթև հողը կեղև և կապում, այդտեսակ ծլերը հեշտ են ծակում կեղևը և մակյերեւութը դուրս են դալիս, քան զատ զատ բույսերը շաղացանի դեպքում:

Ծլերը յերեւուց հետո հարկավոր է ժամանակին խնամքով նրանց նոսրացնել, իսկ դրանից հետո բամբակագործը իր ամբողջ ուշադրությունը պիտի դարձնի միջլարքային արանքները քաղհանելու վրա:



Նկ. 14. Հողի յերեսի կեղևը:

Յեթև դաշտը չուտ քաղհանվի, կարելի չէ ջրումները պակասանել իսկ յեթև ջուրը պակասում է, բույսերը պաշտպանված են լինում չորանալուց, վորովհետև լավ փխրունացած հողը ավելի լավ է պահպանում ջրի պաշտը և յերկար ժամանակ մնում է խոնավ:

Շարքացանի դեպքում միջլարքային արանքները մշակելու համար գործ և ածվում հատուկ թեթև հերկող մեքենա «Պլանետ»։ Պլանետին լծում են սովորաբար մի ձի կամ մի լուծ յեղ. բանվորը և մեքենան շարժվում են այն միջլարքային արանքով, վորը մշակվում է, իսկ յեղները գնում են կողքի արանքներով: Վորպեսզի յեղները թփերը չկոխտան և շարժվեն արանքի մեջ տեղը, շինում են հատուկ լուծ, վորը սովորականից

յերկար և և համապատասխանում միջարժային արանքների լայնությունը:

Այս տեսակ մի պլանետ վարող և որական 8—12 և ավելի բանվոր փոխարինել, նայած անպետք խոտերի չատուցման, հետևապես՝ աշխատանքը մեքենաներով, վորը մատչելի չե միայն շարքացանի դեպքում, ավելի արժան և նստում, քան ձեռի աշխատանքը ուրազներով:

Հաշվենք, քանի բանվոր և պետք մի դեսյատինին ցանքսի, նոսրացման, քաղհանի և փխրեցման համար՝

#### Շարքացանի դեպքում

|                             |         |
|-----------------------------|---------|
| Ցանքը փոցխով հողի տակ անելը | բանվ. 1 |
| » » »                       | ձի 2    |
| Ծխերի նոսրացումը բանվ.      | 5       |
| Քաղհանը ամառը 4 անգամ բանվ. | 50      |
| Ընդամեն բանվ. որ.           | 56      |
| » ձիու աշխ. որ              | 2       |

#### Շարքացանի դեպքում

|                                                          |            |
|----------------------------------------------------------|------------|
| Ցանքսը սերմնացան մեքենայով                               | բանվ. 1    |
| 1/2 բանվ. 1                                              |            |
| ձի 1                                                     |            |
| Նոսրացումը                                               | բանվ. 5 *) |
| Միջարժային արանքների հերկը քաղհանիչներով (ամառը 3 անգամ) | բանվ. 3    |
| 1/2 բանվ. 3                                              |            |
| ձի 3                                                     |            |

Մարկերով քաղհանը մոլախոտերի մոտ

|                 |          |
|-----------------|----------|
| 4 անգ.          | բանվ. 20 |
| Ընդամ. բանվ. որ | 31       |
| Ձիու աշխ. որ    | 4        |

Տարբերությունը մեծ է: Շարքացանի դեպքում, ինչպես տեսնում ենք, շատ ավելի քիչ են պահանջում բանվորներ, վորոնք այնքան թանկ են, իսկ դաշտային աշխատանքների ժամանակ նրանք կարող են և չճարվել:

\*) Յեթն սերմնացան մեքենան բաժանմունքներ ունի (ГНЕЗДОВАЯ) շատ ավելի քիչ բանվոր և պահանջում:

Շարքացանի և մեքենայի կիրարկման դեպքում շատ հեշտ և արագ և արժան կեղևը վոջնացնել, վորը կազմվում է ծանր հողերի վրա ջուր տալուց և անձրևից հետո (նկար 14) և այս բանը շատ կարևոր է, վորովհետև կեղևը, արևից չորանալով, ճնշում է բամբակենու ցողունները ինչպես մամուլ, խեղդում և բույսը և դանդաղեցնում է նրա աճը:

Հարկավոր է նաև հիշել, վոր շարքացան դաշտի բոլոր թիվերը ունեն հավասար տարածություն իրենց զարգացման համար, արևով լավ են լուսավորված, ստանում են բավականաչափ լուսավորություն, ավելի լավ սպառնոված են հողի սնունդով և այս



Նկ. 15. Բամբակի միջարժային վարը կուլտիվայորով:

պատճառով ավելի արագ և միահամուռ սկսվում է ծաղկելը և կնգուղները հասունանալը: Բերքը միշտ ավելի և բարձր է, քան շարքացան դաշտից և բամբակը ավելի լավ է, տալով սովորի շատ թանկարժեք՝ առաջին տեսակի բամբակ:

Բամբակային ցանքները յերբեմն տուժում են հիվանդություններից և վնասատուներից (վորդը, չոռը, բամբակային վորդի թրթուռը, տիգը և այլն): Հիվանդությունները տարածվում են ավելի շուտ վատ մշակված, խիտ և անպետք խոտերից չմաքրված դաշտերում, այսինքն գլխավորապես շարքացանի դեպքում:


Այսպիսի ցանքների կանոնավոր բժշկելը համարյա անհնար է, այս պատճառով, յեթե վրա յեն տալիս բաղմաթիվ վնասատու-

ներ, բերքի մեծ մասը կորչում է և պատահում են, նույնիսկ  
դեպքեր, վոր բամբակագործը բոլորովին հրաժարվում է ցանք-  
սից:

Իսկ յերբ ցանքսը շարքերով է արած, բամբակագործի հա-  
մար դժվար չէ յերկու կամ յերեք անգամ ամառվա ընթացքում



Նկ. 16. Բամբակի սերմնացանի բարձրացրած դիսկավոր փոցի:



Նկ. 17. Մեկ անիվավոր ձեռքի կուլտիվատոր, պլանտի սիսեմի, քաղհանի և  
հողի փխրացման թաթերի հավաքածուով գուլթանի (թաթեր):

անցնել շարքերով, թիկերի վրա ծծումբ ածել կամ սրսկել վորեն  
դեղով, քաջ խմանալով, վոր այս ծախսը կհատուցվի բերքը ապա-  
հովեցնելով:

Վերջապես շարքացանի դաշտի բերքի հավաքը նույնպես ար-  
ժան կնոտի, քան շաղացանի դեպքում — դեսյատինին բանվոր

պակաս կպահանջվի, վորովհետև շարքերով անցնելով կտով—բամ-  
բակը ավելի հեշտ ու հարմար է հավաքել, քան անկարգ դես ու դեն  
ընկած թիկերի մեջ մտնելով և շարքացան դաշտում հավաքի ժա-  
մանակ թիկերը չեն կոխառվում վոտներով, ճյուղերը չեն կոտրվում  
և կնգողները չեն կոխկռավում հողի վրա, ինչպես այդ լինում է  
շաղացանի դեպքում:

Հետևապես մեզ տեսնում ենք, վոր շարքացանը լավ է ա-  
մեն կողմից, քան շաղացանը և տալիս է բամբակագործին հետևյալ  
առավելությունները՝

1) Պակաս սերմացու յե պահանջվում:

2) Սերմերը կանոնավոր կերպով տարածվում են դաշտի մեջ  
և նույն խորությամբ հողի տակ են արվում, վորից առաջ է դա-  
լիս միահամուռ ծլերը:

3) Ուժեղ ծլերը ավելի հեշտությամբ ծաղկում են կեղևը և  
վայրի խոտերը նրանց չեն խեղդում:

4) Հողի փխրեցումը և քաղհանը ավելի հեշտ է և դրանով  
պահպանվում է խոնավությունը և թիկերը ու կնգողները ավելի  
լավ կզարգանան:

5) Բերքը շատ է բարձրանում և հավաքելը հեշտանում է:

Դժվար է մի առ մի թվել շարքացանի բոլոր առավելություն-  
ները և ավելորդ ել է, վորովհետև ով գոնե մի անգամ այցելել է  
շարքերով ցանած ծամբակի դաշտը, ինքը կհամոզվել, վոր շար-  
քացանը շաղացանից լավ է:

Բամբակագործ, յեթե դու ուզում ես պակաս ծախսել և շատ  
առանձ թո աշխատանքից, լավ բերք ստանալ և նրան թանկ ծախել  
ցանիք շարքերով սերմնացան մեքենայով, քանի վոր նրանով  
կարելի յե շատ ավելի լավ, արագ և արժան ցանել, քան ձեռով:

Իսկ շարքացանի համար անհրաժեշտ մեքենաների և նրանց  
մասին տեղեկությունների համար դիմել մոտակա ագրոպուլսկո:

ՀՀ Ազգային գրադարան



NL0291629

19. 159